

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԵՂՈՒՆ

### ԱՐԳԱՐ ԱՓԻՆՅԱՆ

բ.գ.թ., ԵՊՀ դոցենտ

**Բանալի բառեր՝** ժամանակակից, հայոց լեզու, գեղարվեստական, գրականություն, արձակ, պոեզիա, ճգնաժամ:

Խոսքս ուզում եմ սկսել շնորհակալությամբ՝ ուղղված այս գիտաժողովի նախաձեռնողներին և կազմակերպիչներին: Եվ իսկապես, հանրակրթական և բուհական ոլորտներում հայագիտության, մասնավորապես՝ գրականագիտության և լեզվաբանության հանրամատչելիացման և նրանց հիմունքների ուսուցման, գրականագիտության, լեզվաբանության հիմնախնդիրները, հայագիտական առարկաների դասավանդման գործնական ուղղվածության ապահովման ուղիները, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթական համակարգում, օլիմպիադաները և աշխատանքն օժտված երեխաների հետ, գիտամեթոդական և գիտահանրամատչելի գրականության դերը արդիականացվող կրթական համակարգում՝ արդիական հարցեր են, որ վաղուց կարոտ են քննարկման:

Գիտաժողովի կարգախոսը հետևյալն է՝ «Հայոց լեզուն Հայաստանի Հանրապետությունում գիտության հանրամատչելիացման հիմնական լեզուն է»:

Միանգամից ուզում եմ ավելացնել՝ խնդիրները ճիշտ են ներկայացված, բայց դրանք այնքա՛ն երկար ժամանակ չեն քննարկվել, որ արդեն վաղուց վերածվել են մտահոգությունների:

Բայց կա նաև մտահոգությունների մտահոգությունը, որը ժամանակակից հայ գրականության լեզուն է: Հայպետհրատը վաղուց չկա, չկա նաև պետական վերահսկողություն արդի գրականության և գրականության լեզվի հանդեպ: Մասնավոր հրատարակչությունների և տպարանների սեփականատերերին հետաքրքրում է միայն շահույթը, գրքերը լույս են տեսնում առանց մանրակրկիտ խմբագրման, երբեմն էլ առանց սրբագրման, Լեզվի պետական տեսչությունը լուրմ է: Եվ ջանադիր ու եռանդուն կերպով աղավաղվում է հայոց լեզուն:

Մեր մեծանուն և անգերազանցելի լեզվաբանը՝ Հրայր Աճառյանը, անդրադառնալով Ոսկեդարի հայ գրականության լեզվին, նկատում է. «Գալով լեզվական արժանիքին, ոչ մի դար չկարողացավ մոտենալ ոսկեդենիկ լեզվին և Ե դարի հայերենը ամեն դարի և ամեն ժամանակի համար եղավ լեզվի դասական օրինակ»<sup>1</sup>:

. . . Ի՞նչ են ասելու մեր հետնորդները մեր ժամանակների մասին . . . Ուղղակի ամաչում ես անգամ ենթադրել:

<sup>1</sup> Հրայր Աճառյան, Հայոց գրերը, խմբագրությամբ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Բ. Աղայանի, ԵՊՀ հրատ., Ե., 1984, էջ 269:

Բայց կարդալու են, մեզ ու մեր ժամանակին գնահատական տալու են: Եվ բանաստեղծության կամ գեղարվեստական խոսքի փոխարեն կարդալու են... հետևյալ տողերը, որ գողական ժարգոնով ներկայացնում են Հիսուս Քրիստոսի տասներկու աշակերտներից մեկին՝ Թովմաս առաքյալին, ում մականունը Գուրգեն Խանջյանի պատմվածքում հռչակվում է «Թերահավատ», և իբր ասում են, որ այն ժամանակ Թովմասն ավելի իր թաղերում հարգված տղա է եղել, քան առաքյալ: Ահա թե ինչպես, ինչ լեզվով է է խոսում Թովմաս առաքյալը Գուրգեն Խանջյանի գրվածքում.

«Խաշն ի՞նչ էլավ, արա՛, է՛, առավոտ բարլուսով ուզում եք կատաղցնե՞ք, չեմ հասկընըմ... Թե՞ տեղը չեք բերըմ... Դավայ դե, այ մատուցող, արագացրա, սոված մեռանք, հազար գործ ունենք օրվա մեջ, պարապ չենք, դավայ... Էս քաղաքի օբյեկտները լրիվ հաբրգած են, ախպեր»<sup>2</sup>:

Եվ այս ամենը տպագրվել է մի երկրում, որ առաջինն է ընդունել քրիստոնեությունն իբրև պետական կրոն:

Հայրենիքում սկիզբ առած այս զարհուրելի «շարժմանն» արձագանքեց ցավոք նաև Սփյուռքը՝ բանաստեղծ Նորվանը Թեհրանում տպագրած իր գրքում է.

Մայրս ասում էր

Շոիր բանաստեղծութեան մէջ ու

Հացի ետեւից գնա,

Որ դրանով չես կարող անգամ հետոյքդ մաքրել

...իսկ հա՞ցս,

40 տարի է ինչ մեզի համ ունի՞<sup>3</sup>:

Բանաստեղծը բողոք ունի, դժգոհում է, որ ոչ ոք հեռուների մասին չի խոսում, դժգոհում է, որ ամեն օր ջրում է իր սենյակի արհեստական ծաղիկները, բայց անիծյալները չեն աճում, որ գրողները գրում են այնպես, ինչպես չեն ցանկանում... արդար բողոք է, բայց մի՞ թե բողոքն այսպես և այս լեզվով են արտահայտում:

Քննելով չափածոն որպես գեղարվեստական խոսքի հատուկ որակ և անդրադառնալով արձակի և չափածոյի տարբերակիչ առանձնահատկություններին՝ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը շեշտում է հետևյալ հանգամանքը. «Ամենից առաջ, չափածոն աչքի է ընկնում բովանդակության հուզական բնույթով, զգացմունքային լարվածությամբ և հագեցվածությամբ»<sup>4</sup>:

<sup>2</sup> **Գուրգեն խանջյան.** ըստ Թովմասի կամ Թովմաս առաքյալի մենախոսությունը խաշի սպասելիս. հատուկ՝ «Ինքնագրի» համար, «ինքնագիր» գրական հանդես. 27/07/2011:

<sup>3</sup> **Նորվան,** Այս տողերը տառապում են ջերմախտով, Թեհրան, «Ալֆա» հրատարակչություն, 2005, էջ 3:

<sup>4</sup> **Էդվարդ Ջրբաշյան,** Գրականագիտության ներածություն. Բանարվեստի հիմունքներ. Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011, էջ 213:

Շեշտելով նաև, որ «առհասարակ հնարավոր չէ չափաձոն նույնությամբ վերաշարադրել արձակ ձևով կամ արձակ խոսքը մեխանիկորեն վերածել ոտանավորի»<sup>5</sup>, գիտնականը մեջբերում է Լև Տոլստոյի դիտարկումը.

«Բանաստեղծությունը լավն է... երբ այն չի կարելի վերածել արձակի: Իսկ երբ զգում ես, որ հեղինակը մտածում է արձակով, բայց արտահայտվում է ոտանավորով, դա վատ բանաստեղծություն է»<sup>6</sup>:

Ասվածը վերաբերում է երիտասարդ հեղինակներ Սիրանուշ Կոստանյանին, Արամ Մամիկոնյանին և շատ- շատերին .

Ձմեռը փեչ դնող էլ չկա:

Ռոմանտիզմը մնացել ա սովետում:

Լարերը կտրած հեռախոսից փոշին եմ փչում:

Սիրածներին կոպեկով զանգել էլ չկա<sup>7</sup>:

Ի՞նչ է մեզ հուշում արդի գրականության լեզուն իբրև նշան, լեզուն իբրև գաղափար:

Հայտնվել են նոր քնարական հերոսներ՝ եսասերներ և ցինիկներ, որոնք ազատ են «տարրական բարոյականությունից», տառապում էին ձանձրույթից, մե- նակ են ու դատարկ, իրենց մղձավանջային գոյությունը նրանք փորձում են լցնել անվերջ «անկողնային» տեսարաններով, սոցիալական անտարբերությամբ ու կատաղի եսասիրությամբ:

Սակայն այս հեղինակները պիտի իմանան, որ իրենց ոճը և հերոսները բոլորովին էլ նոր չեն: Սա դասական «ոչ գրականություն» շարժումն է, որ գրեթե հարյուրամյա հնություն ունի: Իսկ հոսանքի այս անվանումը 1958 թ. առաջարկեց Կլոդ Մորիակը, իր «ժամանակակից ոչ գրականությունը» գրքում: Եվ իրար հետե- վից երևան եկան «ոչ կերպարվեստ», «ոչ կինո», «ոչ բանաստեղծություն», «հա- կադրամա», «հակավեպ» և այլն, և այլն:

Քանի որ խոսք բացեցինք գրական ոճի մասին, ավելացնենք՝ հիմնական խոչընդոտը, որ խանգարում է մեր երիտասարդներին, օտարացումն է ազգային նկարագրից, հայ գրականության ազգային ոճից: Այո, կա ազգային ոճ գրակա- նության մեջ, և որքան էլ միմյանցից տարբերվեն մեր դասականները, նրանց միավորում է միասնության մեծագույն ոգին՝ հայկական ոճը:

Հարցի խոր մեկնություն ունի մեծ քննադատ Արշակ Չոպանյանը.

«Անոնք, որ կկարծեն թե «հայ ոճ մը» գոյություն չունի, թող Աբովյանը մոտեն ուսումնասիրեն: Գրիգոր Նարեկացվույն հետ Աբովյան ամենեն զուտ ու հզոր ներկայացուցիչն է հայ զգայնության, հայ քնարերգության, հայ բացատրության... ահավասիկ ինչ որ կգտնենք Նարեկացիին «Ողբերգության մատյան»ին ու

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 214:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> **Սիրանուշ Կոստանյան**, ռոմանտիզմը մնացել ա սովետում, <https://groghutsav.am/2025/03/22/siranush-kostanyan-ggmb-enkav-shenq-er/>

Աբովյանի «Հայրենասերի ողբ»-ին մեջ, երկու ամենեն հայ գրքերը, որ ունինք, եւ որոնցմէ միայն կրնա ծնիլ հայ ճշմարիտ բանաստեղծություն մը»<sup>8</sup>:

Գեղագիտական դավանանքի, լեզվական կուլտուրայի բացակայությունը ճանապարհ բացեցին միջակության առջև: Մենք կողմ ենք մեծ անհատականությունների. նրանց կարիքն ենք զգում այսօր առավել քան երբևէ: Եվ բարեբախտաբար հայ գրական միտքը հաղթահարում է այս ճգնաժամը: Վկա նոր հեղինակները, որ գալիս են:

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

Հանրակրթական և բուհական ոլորտներում հայագիտության, մասնավորապես՝ գրականագիտության և լեզվաբանության հանրամատչելիացման և նրանց հիմունքների ուսուցման, գրականագիտության, լեզվաբանության հիմնախնդիրների, հայագիտական առարկաների դասավանդման գործնական ուղղվածության ապահովման ուղիների, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հարցում ներկայումս առկա է ճգնաժամային իրավիճակ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է լեզվի հարցերի մանրագնին քննարկումների շարք սկսել, ուշադրություն դարձնել կառավարության անդամների, պատգամավորների, նաև հեռուստատեսությամբ հնչող լեզվական աղավաղումներին, հայկական ֆիլմերի, սերիալների լեզվի, գեղարվեստական թարգմանությունների ուսումնասիրությանը:

Միևնույն ժամանակ կարևոր ենք համարում լեզվական խնդիրների հանդեպ պետական հոգածությունը:

Լեզվի տեսչությունում անհրաժեշտ է ստեղծել գեղարվեստական խոհուրդ:

### **SUMMARY**

Currently, there is a crisis situation in the sphere of general and higher education in terms of the development of Armenian studies, in particular literary studies and linguistics, teaching their foundations, problems of literary studies, linguistics, ensuring the practical orientation of teaching Armenian studies, modern information and communication technologies.

The study shows that it is necessary to initiate a series of detailed discussions on language issues, pay attention to linguistic distortions, study the language of Armenian films, TV series and literary translations.

At the same time, we consider it important for the state to take care of language issues. It is necessary to create an artistic council under the Language Inspectorate.

### **РЕЗЮМЕ**

В настоящее время в сфере общего и высшего образования сложилась кризисная ситуация в плане становления арменоведения, в частности литературоведения и языкознания, преподавания их основ, проблем литературоведения, языкознания, обеспечения практической направленности преподавания предметов арменоведения, современных информационно-коммуникационных технологий.

<sup>8</sup> Արշակ Զոպանյան, Երկեր, Ե., «Սովետական գրող», 1988, էջ 393:

Исследование показывает, что необходимо инициировать серию детальных обсуждений по языковым вопросам, обратить внимание на языковые искажения, изучать язык армянских фильмов, сериалов и литературных переводов.

В то же время мы считаем важной государственную заботу в языковых вопросах. Необходимо создать художественный совет при Языковой инспекции.